







# ՏԵՂԵԿԱԼՔ


## 2018-2020թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (հունվար ամսվա վերջի դրությամբ)




2020թ. հունվարի 31-ի դրությամբ՝

- 1) ՀՀ պետական պարտքը կազմել է 3,515.22 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0,052%-ով, իսկ 2019 և 2018 թթ. հունվարի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 3,97%-ով և 6,03%-ով,
- 2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 3,282. 8 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0,13%-ով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 5,45%-ով և 8,66%-ով,
- 3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 232.42 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0,98%-ով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 13,28%-ով և 21,05%-ով,
- 4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 7,343.41 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0,26%-ով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 5,65%-ով և 6,46%-ով,
- 5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6,857.88 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0,34%-ով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 7,16%-ով և 9,1%-ով,
- 6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 485.53 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0,77%-ով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 11,87%-ով և 20,73%-ով,
- 7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2,520.79 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0,82%-ով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 3,65%-ով և 5,68%-ով,
- 8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 762.01 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3,37%-ով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 11,89%-ով և 19,87%-ով,
- 9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 232.42 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0,98%-ով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 13,28%-ով և 21,05%-ով,
- 10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 5,266.01 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0,61%-ով, իսկ 2019 և 2018 թթ. հունվարի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 5,33%-ով և 6,1%-ով,
- 11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 1,591.87 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2019 թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 3,59%-ով, իսկ 2019 և 2018 թթ. հունվարի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 13,7%-ով և 20,36%-ով,
- 12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 485.53 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0,77%-ով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ համապատասխանաբար՝ 11,87%-ով և 20,73%-ով:


ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը, մլն ԱՄՆ դոլար




ՀՀ կառավարության արտաքին պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների, %



ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված տոկոսավճարներ, (մլրդ դրամ, առանց մուրհակների սպասարկման ծախսերի)



ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված ներքին և արտաքին տոկոսավճարներ, մլրդ դրամ



ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2020թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 4,281.55 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2018թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 0.65%-ով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ աճելով համապատասխանաբար՝ 3,1%-ով և 4,73%-ով, 2019թ. հունվարի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում՝

- 1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 75.28%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ավել է 0,17 տոկոսային կետով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 1,58 և 3,23 տոկոսային կետով,
- 2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 24.25%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 0,16 տոկոսային կետով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 1,65 և 3,38 տոկոսային կետով,
- 3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.47%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. հունվարի 31-ի համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.01, 0.07 և 0.15 տոկոսային կետով:


2020թ. հունվարին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված՝

- 1) տոկոսավճարները կազմել են 3,05 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 0,4 և 1,15 մլրդ. դրամով:
- 2) ներքին տոկոսավճարները կազմել են 0,2 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.44 և 0.16 մլրդ. դրամով:
- 3) արտաքին տոկոսավճարները կազմել են 2.84 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 0,84 և 1,31 մլրդ. դրամով:




ԱՃԲԳ


Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ




Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին, մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար




2020թ. հունվարին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը`

- 1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 19,85 մլրդ. դրամ, ինչը 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 8,86 մլրդ դրամով կամ 80.69%-ով, իսկ 2018թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 0,79 մլրդ դրամով կամ 3.85%-ով,
- 2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 25,11 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար` 14,39 և 4,98 մլրդ դրամով կամ 134.15% ով և 24.75%-ով,
- 3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է -5,3 մլրդ. դրամ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար` 5,52 և 5,78 մլրդ դրամով կամ 2138.69% ով և 1131.99%-ով:


ՀՀ կառավարության կողմից 2020թ. հունվարին`

- 1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 5,97 մլն. դոլար տոկոսավճար, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար` 44,8%-ով և 88,28%-ով,
- 2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 18,03 մլն դոլարի մայր գումար, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար` 135,57%-ով և 123,67%-ով,
- 3) ստացվել են 6,97 մլն. դոլարի վարկային միջոցներ, ինչը 2019թ. և 2018թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար` 14,97%-ով և 23,94%-ով,
- 4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 24,0 մլն. դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը ինչը 2019թ. և 2017թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար` 103,8%-ով և 113,68%-ով:

### Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



### Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



2020թ. հունվարի 31-ի դրությամբ՝


- 1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 704,13 մլրդ դրամ, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. հունվարի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 23.08, 105.98 և 136.55 մլրդ. դրամով,
- 2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3705 օր, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ պակաս է 29, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ ավել է համապատասխանաբար՝ 416 և 629 օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2020թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 4.86%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ մեծ է 0,04, իսկ 2019. և 2018թթ. հունվարի 31-ի նկատմամբ փոքր է համապատասխանաբար՝ 0,14 և 0.06 տոկոսային կետերով:


ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2020թ. հունվարի 31-ի դրությամբ՝

- 1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 0.73%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0,005 տոկոսային կետով, 2019թ. հունվարի 31-ի համեմատությամբ փոքր է 0,11 տոկոսային կետով, իսկ 2018թ. հունվարի 31-ի համեմատությամբ մեծ է 0,03 տոկոսային կետով,
- 2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 6.81%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. հունվարի 31-ի համեմատությամբ փոքր է համապատասխանաբար՝ 0.05, 0.74 և 1.19 տոկոսային կետերով:
- 3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 92.45%, ինչը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. հունվարի 31-ի համեմատությամբ մեծ է համապատասխանաբար՝ 0.05, 0.85 և 1.17 տոկոսային կետերով:

### ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %




### ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման




ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2020-2022ԹԹ. ՈՎՁՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ (հունվար ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2020-2022թթ. ռազմավարական ծրագրով՝


1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2020թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել 9.07 տարի: Այս ցուցանիշը 2019թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից ավել է 0.45 տարով, իսկ 2018թ. արձանագրված ցուցանիշից պակաս է 0.01 տարով,

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2020թ. հունվարի 31-ի դրությամբ կազմել է 12.03%, որը 2019թ. և 2018թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակից պակաս է համապատասխանաբար՝ 0.1 և 3.49 տոկոսային կետով,

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռը ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2020թ. հունվարի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 83.92%, լողացող տոկոսադրույքով՝ 16.08%: Ընդ որում, 2020թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2019թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշից ավել է 0.09 տոկոսային կետով, իսկ 2019 և 2018թթ. հունվարի 31-ի համապատասխան ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար՝ 1.09 և 2.81 տոկոսային կետերով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 20%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2020թ. հունվարի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 76.79%, ներքին պարտք՝ 23.21%: Ընդ որում, 2020թ. հունվարի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշիռը ցուցանիշը 2019թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 և 2018թթ. հունվարի 31-ի համապատասխան ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար՝ 0.73, 1.34 և 2.17 տոկոսային կետերով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %

